

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն**

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ**

**ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**«ՋՐԱՌ»**

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ 2023 ԹՎԱԿԱՆ**

21 մայիս 2024թ.

ք. Երևան

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Գլոբ աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 01.04.2024 թվականին կնքված N «ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-24/23-1» ծածկագրով Նախարարության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման մասին պայմանագրի հավելված N 1-ի 9-րդ կետի՝ «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի ներքին աուդիտորներ՝ Դավիթ Հարությունյանի, Սամվել Հովսեփյանի, Սուսաննա Սեդրակյանի, Զաբել Մաթոսյանի, Վահան Հարությունյանի և Նարեկ Շաբուրյանի կողմից Նախարարության ենթակայությամբ գործող «Ջրառ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) իրականացվել է ֆինանսական և գնումների աուդիտ 2023 թվականի համար՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և Նախարարության ներքին աուդիտի կանոնակարգի:

Ընկերության 2023 թվականի գործունեության վերաբերյալ իրականացված աուդիտորական առաջադրանքի հիմնական նպատակն է «Բաժնետիրական

ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի 2 կետի և ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման պահանջների կատարման ապահովումը, մասնավորապես՝ Ընկերության 2023թ. տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ուսումնասիրությունը, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին (այսուհետ՝ Նախարար) անկախ ու օբյեկտիվ հավաստիացում տրամադրելը, որն ուղղված կլինի Ընկերության գործունեության բարելավմանը և հավելյալ արժեքի ստեղծմանը:

Օգտագործելով վերլուծական և մանրամասների ստուգման ընթացակարգեր իրականացվել է ֆինանսական աուդիտ, որի նպատակն է գնահատել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, ինչպես նաև վերջիններիս համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին, հարկային և այլ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև հավաստիացման ծառայությունների միջոցով, հետ հսկողության շրջանակում աուդիտի է ենթարկվել Ընկերության (պատվիրատուի) կարիքների համար 2023 թվականի ընթացքում գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին ենթակետի հիման վրա իրականացված պետական, ծառայողական և գաղտնիք պարունակող գնումների առնվազն 30 տոկոսը և գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գնումները:

Աուդիտի շրջանակում գնահատվել է ներքին աուդիտի իրականացման հիմնական ոլորտները, աուդիտի ենթակա ստորաբաժանումների մասնակցության առանձնահատկությունները, Ընկերության ղեկավարությանը պատշաճ գնահատականը Ընկերության ներքին հսկողության համակարգի համապատասխանության, հուսալիության և արդյունավետության մասին՝ հիմք ընդունելով ներքին աուդիտի ենթարկված միավորներում արձանագրված խնդիրները:

Գնահատվել է նաև ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը, Ընկերության կառավարչական



գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման (ռիսկերի բացահայտման, գնահատման և հսկման) գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով:

Գնահատման միջոցով հավաստիացում է տրվել Ընկերության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին (ստեղծված լինելու դեպքում), որ Ընկերության ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգերի ներդնումը և պահպանումը)՝ փաստացի իրականացված աուդիտների շրջանակում:

Փաստացի իրականացված աուդիտի շրջանակում այն կօժանդակի Ընկերությանը լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

Սույն հաշվետվությունը օբյեկտիվ կարծիք կտրամադրի վերահսկող մարմիններին Ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ:

Ներքին աուդիտը.

✓ օժանդակում է Ղեկավարին հասնել իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով Ընկերության համակարգերը և ծառայությունները;

✓ նվազեցնում է խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը;

✓ ապահովում է աուդիտորների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին;

✓ ապահովում է «Ներքին աուդիտի մասին» օրենքով աուդիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը;

✓ կատարում է ներքին աուդիտի կոմիտեի քարտուղարի պարտականությունները;

✓ հաշվետու է Ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին;

✓ բացի ներքին աուդիտի գործունեության կառավարման գործառույթներից, չի իրականացնում Ընկերության կառավարման որևէ գործառույթ:

Նախկինում կատարած աուդիտորական աշխատանքերի արդյունքները ընդունվել է ի գիտություն և հաշվի կառնվեն հետագա աշխատանքներում:

Աուդիտի շրջանակներում գնահատվել է ի լրումն վերոգրյալի Ընկերության ներքին ֆինանսական հսկողության համակարգի արդյունավետությունը, որոնց վերաբերյալ աուդիտորական օբյեկտիվ դիտարկումները հնարավորություն կտան Ընկերության գլխավոր տնօրենին և Ընկերության միակ բաժնետիրոջը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, ստանալ հավաստիացում Ընկերության պարտականությունների պատշաճ կատարման մասին:

## II. ԱՈՒԴԻՏԻ ՄՈՏԵՑՈՒՄ

### **2.1 Աուդիտորական աշխատանքերն ընդգրկել են հետևյալ շրջանակները՝**

ա) Ընկերության կողմից իրականացվող գործառույթների օրենսդրության պահանջների համապատասխանության գնահատումը;

բ) Ընկերության եկամուտների/բյուջետային և արտաբյուջետային, ծախսերի հաշվառման և սկզբնական գրանցումների ճշտության գնահատումը, առկա անհամապատասխանությունների բացահայտումը;

գ) Ընկերության բնականոն աշխատանքը խոչընդոտող հանգամանքների բացահայտումը;

դ) Ընկերության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության գնահատումը:

### **2.2 Աուդիտի ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝**

ա) հաշվարկների ստուգում (վերահաշվարկ);

բ) առանձին գործառույթների իրականացման և հաշվապահական հաշվառման փաստաթղթերում դրանց կանոնների պահպանման ստուգում;



- գ) բանավոր հարցումներ Ընկերության ղեկավարությանն ու աշխատակիցներին;
- դ) հաշվապահական հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների համեմատում դրանց նախահաշվային ցուցանիշների հետ;
- ե) ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկությունների համեմատում և համադրում;
- է) Ընկերության տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգում /ուսումնասիրություններ/ վերլուծություններ:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ներքին աուդիտի 2024թ. հաստատված տարեկան ծրագրի, և ի կատարումն Նախարարի 11.04.2024 թվականի թիվ 758-Ա հրամանի, ներքին աուդիտի ծառայություն մատուցող հրավիրված Ընկերության՝ «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ի աուդիտորական խումբը իրականացրել է Նախարարության ենթակայությամբ գործող «Զրառ» փակ բաժնետիրական ընկերությունում 2023 թվականի ընկած ժամանակաշրջանի ֆինանսական աուդիտ և հավաստիացման ծառայությունների միջոցով, հետ հսկողության շրջանակում աուդիտի է ենթարկվել Ընկերության (պատվիրատուի) կարիքների համար 2023 թվականի ընթացքում գնումները:

Աուդիտին մասնակցել են Ընկերության տնօրեն՝ Արտաշես Աբգարյանը և գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արտակ Արսենյանը:

Աուդիտի ընթացքում աշխատանքային խմբում ընդգրկված աուդիտորները ծանոթացել են Ընկերության գործունեությանը վերաբերող հիմնական փաստաթղթերին և գործառույթները կարգավորող օրենսդրությանը:

Հաշվի առնելով առկա ընթացակարգերի մեծածավալ և տարաբնույթ լինելու հանգամանքը ընտրանքները կազմվել են հիմնականում կամայական ընտրության և շղթայական (ծյան փաթիլի) մեթոդաբանությամբ, (այսինքն՝ ընտրվել են կամայական գործարքներ և ուսումնասիրվել վերջինների հետ փոխկապակցված այլ գործարքներ և փաստաթղթեր):

Աուդիտորական ապացույցների հավաքագրումն իրականացվել է հարցումների, դիտարկումների, ստուգումների, վերահաշվարկների ընթացակարգերի համատեղ կիրառմամբ:

Իրականացվել են հսկողական համակարգի և ըստ էության թեստեր, որոնց ընթացքում օգտագործվել են՝ տեղի ունենալու կամ առկայության, ամբողջականության, ճշգրտության, օրինականության, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլման, ներկայացման, գնահատման. իրավունքների և պարտականությունների կատարման հաստատումներ:

### **III. Բացահայտումներ և եզրակացություններ**

#### **Ընդհանուր տեղեկատվություն**

Աուդիտն իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» ՓԲԸ-ում, որը շահույթ հետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող Ընկերություն է: Ընկերության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ Ընկերության կառավարումն իրականացնող լիազոր մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Ընկերության կանոնադրությունը հաստատվել է «Ջրառ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի 26.07.2021 թվականի N 03 որոշմամբ, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցվել է 06.08.2021 թվականին, գրանցման համարը 222.120.00617:

Համաձայն Ընկերության կանոնադրության, Ընկերության գործունեության հիմնական տեսակը իր տիրապետմանը և օգտագործմանը տրված ջրային համակարգերի պահպանումն ու շահագործումն է, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին ջրի մատակարարումը՝ պետական սեփականություն հանդիսացող ոչ մրցակցային ջրային համակարգերի կառավարման միջոցով, որպես ոչ մրցակցային ջրամատակարար, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ու պայմանագրային հիմունքներով կարգավորող հանձնաժողովի սահմանված սակագներով, ոռոգման ծառայությունների ոլորտում իրականացնում է բնակչության և տնտեսության կարիքների՝ ջրապահանջարկի ապահովման նորմավորված ջրամատակարարումը:



Ընկերության բաժնետիրական կապիտալը հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմում է 49,161,868.6 հազար դրամ, որը կազմում է 6,047,491 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 8.1293 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով: Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորած մարմնի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով և այլ իրավական ակտերով:

## **1. Հաշվապահական հաշվառում**

### **1.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ.**

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն Ընկերության ղեկավարը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում Ընկերելու համար: Ընկերության ղեկավարը պարտավոր է լիազոր մարմնի հաստատած հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա սահմանել Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետներում այն համաձայնեցնել համապատասխան պետական մարմնի (եթե այդպիսին կա) և լիազոր մարմնի հետ, ապահովել հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ պատրաստելն ու ներկայացնելը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառման քաղաքականություն առկա է, որը Տնօրենի կողմից սահմանվել է 2021 թվականի օգոստոսի 27-ին:

**Պահպանվել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, այն է.** «Ընկերության ղեկավարը սահմանում է Ընկերության

հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, եթե այդ իրավասությունը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ կառավարման այլ մարմնի»:

**Ընկերությունը հաշվապահական հաշվառումն իրականացրել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջին համապատասխան՝ կառուցվածքային ստորաբաժանման միջոցով:**

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի, Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու համար:

**1.2 Ընկերության հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը.**

Ընկերությունը պատրաստել է իր ֆինանսական հաշվետվությունները՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը: Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարել է «Հայկական ծրագրեր» համակարգչային ծրագրով: Ֆինանսական հաշվետվության ձևաչափերը կազմվել են համաձայն **ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 12.12.2001թ. թիվ 465 հրամանով հաստատված ձևաչափի՝ Ձև-1-ից 5-ը (սույն հրամանը ներկայումս չի գործում):**

**1.2.1 Ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների հաշվետվությունների ուսումնասիրություն.**

Ընկերության կողմից ներկայացված ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները՝ 2023 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար.

Հազար դրամ

Ցուցանիշի անվանումը	2022	2023
1	2	3
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	1,360,204	1,404,404
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(2,744,844)	(1,480,327)
Համախառն շահույթ (վնաս)	(1,384,640)	(75,923)



Իրացման ծախսեր	-	(1,521,588)
Վարչական ծախսեր	(314,964)	(342,415)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	(1,699,604)	(1,939,926)
Գործառնական այլ եկամուտներ	1,016,123	1,708,452
Գործառնական այլ ծախսեր	(58,141)	(21,673)
Գործառնական շահույթ (վնաս)	(741,622)	(253,146)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	1,518	1,949
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	(740,104)	(251,197)
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	56	1,374
Ջուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	(740,048)	(249,823)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-	-
Ջուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	(740,048)	(249,823)

**Դիտարկումներ՝ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության**

1. **Հաշվետվության ձևաչափ** - Ընկերության կողմից պատրաստած հաշվետվությունը պետք է համապատասխանի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ-1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»)-ին՝ իր ձևաչափով, բովանդակությամբ և կառուցվածքով:

2. **Հասույթ** - Ընկերության հասույթն ամբողջությամբ ձևավորվել է պետական սեփականություն հանդիսացող ոչ մրցակցային ջրային համակարգերի կառավարման միջոցով, պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին ջրի մատակարարման, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ու պայմանագրային հիմունքներով կարգավորող հանձնաժողովի սահմանված սակագներով, ոռոգման ծառայությունների ոլորտում բնակչության և տնտեսության կարիքների՝ ջրապահանջարկի ապահովման նորմավորված ջրամատակարարան արդյունքում:

3. **Գործառնական այլ եկամուտներ** - այս հոդվածով ստացված եկամտի հիմնական մասը ձևավորվել է Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարներից, սուբսիդիայից և գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից:

1.2.2 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

ԱԿՏԻՎ	2022	2023
1	2	3
<b>I. Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		
Հիմնական միջոցներ	56,069,037	70,144,286
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	130,057	130,057
Ոչ նյութական ակտիվներ	-	933
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>	<b>56,199,094</b>	<b>70,275,277</b>
<b>II. Ընթացիկ ակտիվներ</b>		
Նյութեր	37,525	47,622
Արագամաշ առարկաներ	6,028	9,301
Տրված ընթացիկ կանխավճարներ	39,851	11,374
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	1,047,768	866,345
Այլ դեբիտորական պարտքեր	31,713	34,554
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	76,822	67,738
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	-	21,530
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>	<b>1,239,706</b>	<b>1,058,464</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>57,438,800</b>	<b>71,333,741</b>
<b>ՊԱՍԻՎ</b>		
1	2	3
<b>III. Սեփական կապիտալ</b>		
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	36,998,322	49,161,869*
Կուտակված շահույթ	(36,030,226)	(36,280,049)
Սեփական կապիտալի այլ տարրեր	56,338,021	58,327,052
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>57,306,117</b>	<b>71,208,872</b>
<b>IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	125,000	116,000
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>	<b>125,000</b>	<b>116,000</b>
<b>V. Ընթացիկ պարտավորություններ</b>		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	7,090	8,496
Ստացված ընթացիկ կանխավճարներ	175	373
Այլ կրեդիտորական պարտքեր	417	-
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>	<b>7,682</b>	<b>8,869</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>	<b>57,438,800</b>	<b>71,333,741</b>

\* Ի դեպ կանոնադրական կապիտալի ավելացման հետ կապած փոփոխությունը դեռևս կադարած չէ (տես՝ էջ 7):



1.2.3 Դրամական միջոցների հոսքեր

Հազար դրամ

Ցուցանիշի անվանումը	Գումար	2023			
		դրամարկղ		բանկային հաշիվներ	
		դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ
1	3	4	5	6	7
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	76,821.6	34,5		74,989.6	
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր</b>					
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	1,858,906.5			1,858,906.5	
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	<b>1,986,312.2</b>			<b>1,930,695.3</b>	
Սուբսիդիա	1,285,129.5			1,285,129.5	
Դրամաշնորհ	624,002			624,002	
Կանոնադրական կապիտալի ավելավում (ՀՀ կառավարության 27.07.2023 թ. N1274-Ն և 21.04.2023թ. N590-Ն որոշումներ )	12,163,550.5			12,163,550.5	
<b>Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր</b>	<b>16,008,769.2</b>	<b>34.5</b>		<b>15,953,152.3</b>	
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր</b>					
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	200,448	4.2		200,448	
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	2,569,774.9			2,569,774.9	
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	631,612.9			631,612.9	
Վճարումներ բյուջե	385,218.7			385,218.7	
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ					
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	<b>12,230,798.0</b>	<b>23.2</b>		<b>12,182,604.1</b>	
	12 163 550,5			12,163,550.5	
<b>Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր</b>	<b>16,017,852.5</b>	<b>27.4</b>		<b>159,696,586</b>	
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>(9,083.3)</b>	<b>7.1</b>		<b>(9,083.3)</b>	

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(9,083.3)	7.1		(9,083.3)	
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ					
<b>Ներքին շարժեր</b>					
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	67,738.3	7.1		67,731.2	

Ընկերությունը պետք է դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պատրաստի հաշվապահական հաշվառման միջազգային ՀՀՄՍ 7 ստանդարտի պահանջներին համապատասխան և այն ներկայացնի որպես իր ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մաս՝ յուրաքանչյուր այն ժամանակաշրջանի համար, որի համար ներկայացվում են ֆինանսական հաշվետվություններ:

«Դրամական միջոցների հոսքերի» ֆինանսական հաշվետվությունը նախատեսված է հաշվապահական հաշվեկշռի հաշիվների և եկամտի՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա ազդեցությունը ցույց տալու համար:

Աուդիտի խմբի կողմից իրականացվել է դրամական հոսքերի աուդիտ, որը հիմք է հանդիսանում Ընկերության եկամուտների և կատարած դրամական ծախսերի վերաբերյալ ճիշտ կարծիք կազմելու համար:

Ընկերության կողմից ներկայացված հաստատված «Դրամական միջոցների հոսքերի» հաշվետվությունում արտացոլված ցուցանիշները հավաստի են, որը **չի առաջացրել արդեն իսկ հաշվառված մնացորդների հավաստումների խեղաթյուրումների ռիսկեր:**



## 2. Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն

### 2.1 Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

#### 2.1.1 Կապիտալի ռիսկի կառավարում

Սեփական կապիտալի կառավարման հիմնական նպատակն է սեփական կապիտալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի պահպանումը՝ Ընկերության գործունեության աջակցության և մասնակիցների շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևավորված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական պահանջները բավարարելու և շուկայի վստահությունը պահպանելու համար: Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող մոտեցումը չի փոխվել: Ընկերության նկատմամբ չեն գործում կապիտալի կառավարմանը վերաբերող արտաքին պահանջներ:

Ստորև ներկայացվում է հաշվետու ամսաթվերի դրությամբ Ընկերության պարտքի և կապիտալի հարաբերակցությունը.


ՀՀ դրամ /հազար/	2023	2022
Ընդամենը պարտավորություններ	124,869	132,683
Հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները	67,738	76,822
Զուտ պարտքը	57,131	55,861
Ընդամենը սեփական կապիտալ	71,208,872	57,306,117
<b>Կապիտալի և պարտքի հարաբերակցությունը</b>	<b>1,246.41</b>	<b>1,025.87</b>

### 2.1.2 Բաժնետիրական ընկերության զուտ ակտիվներ

Ցուցանիշ	Ցուցանիշի նշանակությունը				Փոփոխություն	
	Հազար դրամ		%		Հազար դրամ (u.2-u.3)	± % ((u.2-u.3): u.3)
	31.12.2023	31.12.2022	31.12.2023	31.12.2022		
1	2	3	4	5	6	7
1. Չուտ ակտիվներ	71,208,872	57,306,117	99,8	99,8	13,902,755	24,3
2. Բաժնետիրական կապիտալ	49,161,869	36,998,322	68,9	64,4	12,163,547	32,9
3. Տարբերություն (տող1-տող2)	22,047,003	20,307,795	30,9	35,4	1,739,208	8,6

Ընկերության զուտ ակտիվները վերլուծված ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ 44,8%-ով գերազանցում են կանոնադրական կապիտալը: Ընդ որում, հարկ է նշել, որ զուտ ակտիվները տարվա կտրվածքով աճել են 24,3%-ով: Չուտ ակտիվների գերակշռումը կանոնադրական կապիտալի նկատմամբ և միևնույն ժամանակ դրանց աճը տվյալ ժամանակաշրջանում ցույց է տալիս Ընկերության լավ ֆինանսական դիրքը այս ցուցանիշի մասով:

Չուտ ակտիվների և բաժնետիրական կապիտալի տեսանելի փոփոխությունը ներկայացված է հետևյալ գրաֆիկում.



Այսպիսով, զուտ ակտիվների արժեքը գերազանցում է բաժնետիրական կապիտալի արժեքը ոչ միայն 2023 թվականի դեկտեմբերի 31-ի, այլ նաև նախորդ հաշվետու ամսաթվի դրությամբ, հետևաբար հետևաբար այս գործոնի պատճառով քիզնեսի



շարունակականության սպառնալիքը կարելի է համարել աննշան, կորստի ռիսկը **բացակայում է:**

### 2.1.3 Բաժնետիրական ընկերության վճարունակություն

Ստորև վերլուծված է բաժնետիրական ընկերության ունեցած պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու ունակությունը՝ համեմատելով ակտիվները ըստ իրացվելիության և պարտավորությունները ըստ ժամկետայնության.

Ակտիվներ 31.12.2023	Հազար դրամ	Պարտավորություններ 31.12.2023	Հազար դրամ	Ակտիվներով պարտավորությունների ծածկում /հազար դրամ/
1	2	3	4	5
Բացարձակ իրացվելի ակտիվներ (դրամական միջոցներ և համարժեքներ)	67,738	Ընթացիկ պարտավորություններ (կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր)	8,869	58,869
Ընթացիկ ակտիվներ՝ առանց պաշարների	945,457	Կարճաժամկետ պարտավորություններ	8,869	936,588
Ընթացիկ և նյութական ոչ ընթացիկ ակտիվներ	71,202,751	Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորություններ	124,869	71,077,882

Ակտիվների ըստ իրացվելիության աստիճանի և պարտավորությունների ըստ մարման ժամկետի հարաբերակցության վերլուծությունը ցույց տվեց հետևյալը.

- բաժնետիրական ընկերությունը ունի բավական բարձր իրացվելի ակտիվներ առավել հրատապ պարտավորությունները (ընթացիկ կրեդիտորական պարտավորություններ) ամբողջությամբ մարելու համար;
- արագ իրացվող ընթացիկ ակտիվների գումարը բավարար է բոլոր կարճաժամկետ պարտավորությունները մարելու համար;
- Ընկերությունն ունի բավականաչափ իրացվելի ակտիվներ՝ ողջամիտ ժամկետում ամբողջությամբ մարելու իր պարտավորությունները:


Հաշվի առնելով, որ ակտիվների և պարտավորությունների բոլոր երեք հարաբերակցությունները դրական են, բաժնետիրական ընկերության հաշվեկշռի կառուցվածքը **ցույց չի տալիս շարունակական գործունեության կորստի ռիսկ:**



## 2.1.4 Բաժնետիրական ընկերության ֆինանսական կայունություն

Ընկերության ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական գործակիցներ չորսն են՝

- ինքնավարության գործակից, որն իրենից ներկայացնում է սեփական կապիտալի հարաբերակցությունը հաշվեկշռին և բնութագրում է Ընկերության կախվածության աստիճանը փոխառու կապիտալից, իսկ նորմատիվային արժեքը տվյալ ոլորտի համար նախատեսված է 0,55 և ավելի (օպտիմալը 0,65-0,75): Ընկերության ինքնավարության գործակիցը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,0: Արդյունքում ստացված արժեքը չի տեղավորվում այս ցուցանիշի համար ընդունված նորմայի մեջ՝ կազմելով ընդհանուր կապիտալի 100%: Ընկերությունը չափազանց զգուշավոր է փոխառու միջոցների ներգրավման հարցում: Ինքնավարության գործակիցը 01.01-31.12.2023 ժամանակահատվածում մնացել է գրեթե անփոփոխ՝ աճելով ընդամենը 0,01-ով:



- սեփական շրջանառու ակտիվներով ապահովման գործակից, որն իրենից ներկայացնում է սեփական կապիտալի և ոչ շրջանառու ակտիվների հարաբերակցությունը շրջանառվող ակտիվների հետ և ցույց է տալիս Ընկերության սեփական միջոցների բավարարությունը ընթացիկ գործունեության ֆինանսավորման համար: Սեփական շրջանառու ակտիվներով ապահովման գործակիցը 2022թ. համեմատ նվազել է 0.01-ով՝ կազմելով 0,88: 31.12.2023 թվականի դրությամբ այս գործակիցը համապատասխանում է սահմանված նորատիվին (0,1 և ավելի):



- ընթացիկ (ընդհանուր) իրացվելիության գործակիցը ունի նորմային համապատասխան արժեք (119,34 գործակից սահմանված 2 և ավելի նորմատիվի պայմանում): Չնայած դրան պետք է արձանագրել նվազեցման միտում՝ տարվա ընթացքում գործակիցն նվազել է 42,02-ով;

- բացարձակ իրացվելիության գործակիցը տարվա ընթացքում նվազել է 2,36-ով՝ 0,2 նորմայի պայմաններում կազմելով 7,64:

Արդյունքում, 2023 թվականի վերջին օրվա դրությամբ բոլոր չորս գործակիցներն էլ գտնվում են նորմայի սահմաններում, ինչը բնութագրում է բաժնետիրական ընկերության **շարունակական գործունեության կորստի ռիսկի բացակայություն:**

### 2.1.5 Բաժնետիրական ընկերության գործունեության արդյունավետություն

Տնտեսվարող սուբյեկտի գործունեության ֆինանսական արդյունքն ուղղակիորեն ազդում է նրա կապիտալի կառուցվածքի, պարտավորությունները կատարելու և գործունեության շարունակականությունը պահպանելու ունակության վրա: ՓԲԸ-ի վերջին տարվա գործունեության հիմնական ֆինանսական արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.


Ցուցանիշ	Ցուցանիշի մեծություն, հազար դրամ		Ցուցանիշի փոփոխություն		Միջին-տարեկան մեծություն, հազար դրամ
	2023	2022	հազար դրամ.(տող.2-տող.3)	± % ((2-3) : 3)	
1	2	3	4	5	6
1. Հասույթ	1,404,404	1,360,204	44,200	3,2	1,382,304
2. Ծախսեր հիմնական գործունեությունից	3,344,330	3,059,808	284,522	9,3	3,202,069
3. Շահույթ/(վնաս) (1-2)	(1,939,926)	(1,699,604)	(240,322)	-	(1,819,765)
4. <b>Զուտ շահույթ/(վնաս)</b>	(249,824)	(740,048)	490,224	-	(494,936)

Ինչպես երևում է ֆինանսական արդյունքների հաշվետվությունից, դիտարկվող ժամանակահատվածում Ընկերությունը կրել է վնաս 1,939,926 հազար դրամի չափով, ինչը կազմում է ընդհանուր հասույթի 138,1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծախսեր աճել են 240,322 հազար դրամով կամ 14,1%-ով:

Նախորդ ժամանակաշրջանի համեմատ ընթացիկ ժամանակահատվածում աճել են և՛ վաճառքից եկամուտները, և՛ սովորական գործունեության գծով ծախսերը (համապատասխանաբար 44,200 և 284,522 հազար դրամով): Ընդ որում, տոկոսային արտահայտությամբ ծախսերի փոփոխությունը (+9,3%) գերազանցում է հասույթի փոփոխությանը (+3,2%):

Հաշվետու տարվա այլ գործառնություններից շահույթը կազմել է 1,690,102 հազար դրամ՝ կազմելով 730,546 հազար դրամով (76,1%) ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի շահույթից:

Ստորև ներկայացված գրաֆիկը հստակ ցույց է տալիս Ընկերության եկամտի և շահույթի փոփոխությունը վերլուծված ողջ ժամանակահատվածում.




Որպես Ընկերության գործունեության առևտրային արդյունավետության ցուցիչներ, ստորև վերլուծվում են վաճառքի շահութաբերության և ակտիվների (կապիտալի) շահութաբերության ցուցանիշները:

Վաճառքի շահութաբերությունը կազմել է.



Շահութաբերության ցուցանիշներ	Ցուցանիշի արժեքը, %		Ցուցանիշի փոփոխությունը	
	2023	2022	հազար դրամ.(տող.2-տող.3)	± % ((2-3) : 3)
1	2	3	4	5
<b>Վաճառքի շահութաբերություն</b> Հաշվարկ՝ վաճառքի ինքնարժեքի հարաբերակցությունը հասույթին Նորմալ արժեքը այս ոլորտի համար՝ 6% և ավելի	(138,1)	(125)	(13,1)	↓
<b>Զուտ շահույթի մարժա</b> Հաշվարկ՝ զուտ շահույթի հարաբերակցությունը հասույթին Նորմալ արժեքը այս ոլորտի համար՝ 3% և ավելի	(17,8)	(54,4)	36,6	↑

Վերլուծված ժամանակահատվածում (2022թ. դեկտեմբերի 31-2023թ. դեկտեմբերի 31-ը) Ընկերությունը շահույթ չի ստացել ինչպես վաճառքից, այնպես էլ ընդհանրապես ֆինանսատնտեսական գործունեությունից:





Որպես Ընկերության ակտիվների և կապիտալի օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում ակտիվների շահութաբերությունը (ROA) և սեփական կապիտալի շահութաբերությունը (ROE):

Շահութաբերության ցուցանիշ	Ցուցանիշի
---------------------------	-----------



1	նշանակությունը, %
	2023
1	2
<b>Ակտիվների շահութաբերություն (ROA)</b> Հաշվարկ. զուտ շահույթը (սովորաբար տարվա կտրվածքով) բաժանելով բոլոր ակտիվների արժեքին (այսինքն՝ Ընկերության հաշվեկշիռն). Տվյալ ոլորտի նորմա: 10%-ից ոչ պակաս	(0,4)
<b>Կապիտալի շահութաբերություն (ROE)</b> Հաշվարկ. զուտ շահույթը (սովորաբար տարվա համար) բաժանելով Ընկերության սեփական կապիտալի վրա. Տվյալ ոլորտի նորմա: 18% և ավելի	(0,4)

Հաշվետու տարվա համար ակտիվների շահութաբերությունը (ROA) և կապիտալի շահութաբերությունը (ROE) գնահատվել են կրիտիկական:





Քանի որ շահութաբերության չորս ցուցանիշներից և ոչ մեկը չի բավարարել նորմը, և վերլուծված ժամանակահատվածում եղել է զուտ վնաս, այս գործոնի համար բիզնեսի շարունակականության կորստի ռիսկը կարող է գնահատվել **բարձր**:

Արդյունքում, Ընկերության գործունեությունը շարունակականության վերաբերյալ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

Ֆինանսական պայմաններ (գործոններ)	Շարունակական գործելու ռիսկ	
	ըստ գործոնների	ամփոփիչ գնահատական
1. Զուտ ակտիվների չափը	բացակա	Ցածր ռիսկ
2. Հիմնական ֆինանսական ցուցանիշներ (միջին միավոր), այդ թվում.	ցածր	
2.1. Բաժնեփրակա ընկերության վճարունակություն	բացակա	
2.2. Բաժնեփրակա ընկերության ֆինանսական կայունություն	բացակա	
2.3. Բաժնեփրակա ընկերության արդյունավետությունը	բարձր	

Ընկերության գործունեության շարունակականության (ցածր) ռիսկը սահմանվում է հետևյալ երկու ռիսկերից ամենաբարձրով.

- ռիսկը զուտ ակտիվների մասով – բացակա;
- հիմնական ֆինանսական ցուցանիշների միջին ռիսկը՝ ցածր:

Այս պարագայում որոշիչ է դարձել ֆինանսական հիմնական ցուցանիշների ցուցանիշը:

Ռիսկի ցածր մակարդակը ցույց է տալիս, որ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես արտացոլված է ֆինանսական հաշվետվություններում, էական վտանգ չի ներկայացնում հաշվետու ամսաթվից հետո հաջորդ 12 ամիսների ընթացքում բաժնետիրական ընկերության գործունեության շարունակականության համար:

**Պեպք է նշել, որ Ընկերության վճարունակության և ֆինանսական կայունության գործում մեծ տեղ են զբաղեցնում հատկապես Ընկերության կողմից վաճառվող ոռոգման ջրի սակագները, որոնք դեռևս 2007 թվականի ապրիլի 1-ից չեն վերանայվել և ենթարկվել փոփոխության, ինչն իր անմիջական ազդեցությունն ունի Ընկերության գործունեության շարունակականության հետ:**



*Մասնավորապես հարկ է նշել, որ ոռոգման սակագնի հաշվարկներում իրենց կարևորագույն տեղն ունեն էլեկտրաէներգիայի գծով վճարումները և աշխատողների աշխատավարձը:*

*2007 թվականից ի վեր էլեկտրաէներգիայի սակագինը թանկացել է մի քանի անգամ, իսկ միջին ամսական աշխատավարձը՝ 2007 թվականին կազմել է 35 հազար դրամ, 2023 թվականին՝ 163 հազար դրամ:*

### **2.3 Ֆինանսական հաշվետվությունների և հաշվեկշռի հաստատումը վերստուգողի կողմից**

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման 1-ին կետի 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման օրվանից՝ այդ ընկերություններում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների)՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածով սահմանված լիազորությունների կատարումը վերապահվում է ընկերությունների բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին և նույն որոշման 2-րդ կետի՝ ներքին աուդիտի ոլորտի լիազոր մարմնի կողմից հաստատված կարգով և սահմանված դեպքերում բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինը՝ Նախարարությունը ընդունել է որոշում ներքին աուդիտի ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրելու վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023 թվականին ընկերությունում ներքին աուդիտն իրականացվել է «Քրոու ընդ Ասատրյան» ՍՊԸ-ի կողմից, հետևաբար վերստուգողի լիազորությունները վերապահվել է վերջինիս և 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունները և հաշվեկշիռը ենթարկվել են ստուգման իր կողմից:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը կատարվել է՝ **այն է. «Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան ֆինանսական հաշվետվությունների**



**հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությամբ»:**

Կանոնադրության 16-րդ կետում անհրաժեշտ է կատարել փոփոխություն և այն համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման 1-ին կետի պահանջներին:

#### **2.4 Հիմնական միջոցներ, ակտիվների և պարտավորությունների գույքագրում**

Ընկերությունը 2023 թվականի համար ակտիվների և պարտավորությունների գույքագրում չի իրականացրել:

**Խախտվել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջը.** «Հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ պատրաստող Ընկերությունը տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու նպատակով պարտադիր անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Պարտադիր գույքագրման անցկացման կարգը սահմանում է Հանրային վերահսկողության խորհուրդը»:

**Առաջարկ. խիստ պահպանել օրենքով սահմանված պահանջը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները պարրաստելու նպատակով պարտադիր անցկացնել Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում:**

Հիմնական միջոցների անալիտիկ հաշվառումը տարվել է սկզբնական արժեքով հանված մաշվածություն: Հիմնական միջոցները հաշվառվել են ըստ անվանումների:

Հիմնական միջոցների ամորտիզացիան հաշվառվել է Հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված նորմաների համաձայն:

Հիմնական միջոցների վերագնահատում չի իրականացվել: Ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 70,144,286 հազար դրամ:

**Հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուրակված**



մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չփարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից (հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ՝ ՀՀՄՍ 16):

- Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալները միմյանց չեն համապատասխանում: Շեղումը կազմում է 57,426,301 հազար դրամ:

Հազար դրամ

ՀՀ	Սինթետիկ տվյալներ	Անալիտիկ տվյալներ	Շեղում +, -
1.	70,144,286	12,717,985	57,426,301

Առաջարկ. ձեռնարկել նյութական արժեքների անալիտիկ և սինթետիկ տվյալների համապատասխանեցման գործընթաց:

- Տրանսպորտային միջոցներ

Ընկերության հաշվեկշռում առկա են հետևյալ տրանսպորտային միջոցները.

ՀՀ	Ավտոմեքենայի մակնիշը	Պետ համարանիշը	Տարեթիվը	Ավտոմեքենան շահագործվում է, այո կամ ոչ
1	2	3	4	5
<b>Վարչական</b>				
1	LEND GRUISER PRADO	050 LL 11	2004	այո
2	ՎԱՋ 21214	456 OF 61	2015	այո
3	Նիվա Շևոլե 2123	501 LL 11	2015	այո
4	Հունդայի SANTAFE	054 CC 61	2008	այո
5	Նիսան X-TREAIL	634 LL11	2007	այո
6	Նիվա Շևոլե 2123	055 CC 61	2006	ԲԻԿ
7	ՈՒԱՋ Պատրիոտ	831 AG 61	2015	ԲԻԿ
8	LADA NIVA	782 CL 61	2022	ԲԻԿ
<b>Երևանյան տեղամաս</b>				
9	LADA NIVA	913 CL 61	2022	ԲԻԿ
<b>Արզնի-Շամիրամ ջրանցքի տեղամաս</b>				
10	LADA NIVA	915 CL 61	2022	այո
11	ՎԱՋ 21213	325 AT61	2002	այո
12	ՎԱՋ 21099	233 LL 10	2002	այո
13	ՎԱՋ 21213	883 LL 64	2002	այո
14	Իժ 2717-220	416 SO 61	2002	այո



<i>Գեղարդալճի և Սևաբերդի ջրամբարի հիդրոտեղամաս</i>				
15	Վազ 21213	328 AT 61	2002	այո
<i>Արտաշատի ջրանցքի տեղամաս</i>				
16	LADA NIVA	918 CL 61	2022	այո
17	ՎԱԶ 21213	318 AT 61	2001	այո
18	ՎԱԶ 21213	322 AT 61	2001	այո
19	ՎԱԶ 21213	320 AT 61	2001	այո
20	ԳԱԶ 3110	122 LU 64	2001	այո
21	Իժ 2117-220	327 AT 61	2002	այո
22	ՎԱԶ 21213	316 AT 61	2001	ոչ/09.2022թ./
23	Իժ 2117-220	723 SU 25	2002	այո
<i>Էջմիածնի տեղամաս</i>				
24	LADA NIVA	916 CL 61	2022	այո
25	ՎԱԶ 21213	577 US 34	2002	այո
26	ՎԱԶ 21213	323 AT 61	1999	այո
27	ԳԱԶ 31029	153 LS 64	1997	ոչ/07.2018թ./
28	Իժ 2117-220	575 US 34	2002	ոչ/06.2017թ./
<i>Չրագղանի հիդրոտեղամաս</i>				
29	LADA NIVA	784 CL 61	2022	այո
30	ՎԱԶ 21213	573 US 34	2002	այո
31	ՎԱԶ 21214	260 LL 10	2002	այո
<i>Ազատի քառաստիճանի տեղամաս</i>				
32	ՎԱԶ 2123	040 US 02	2001	այո
33	ՎԱԶ 21214	265 LL 10	2003	այո
34	ԳԱԶ-3307	324 AT 61	2002	այո
<i>Ազատի և Զանգակատան ջրամբարների տեղամաս</i>				
35	LADA NIVA	914 CL 61	2001	այո
<i>Ապարան - Արագածի տեղամաս</i>				
36	ՎԱԶ 21213	321 AT 61	2001	այո
37	Էքսկավատոր ԷԿ12/0,5 խ.մ		2002	այո
38	Բուլդոզեր Բ 10 Մ	92 12 SL	2008	ոչ/10.2020թ./
<i>Մխչյանի արտադրական բազա</i>				
39	LADA NIVA	783 CL 61	2022	այո
40	Ավտոբուս ԿԱՎՁ 3270	314 SU 25	1991	ոչ/2017թ./
41	ԿրԱԶ-256 Բ1	331 AT61	1987	ոչ/10.2020թ./
42	ԿԱՄԱԶ 5511	326 AT 61	2001	այո
43	ԳԱԶ - 3308	434 US 29	2008	այո
44	ՈՒԱԶ	565 CD61	2021	այո
45	Ավտոկռունկ ԿԱ-3575 Ա	312 US 15	1984	ոչ/2015թ./
46	Բուլդոզեր Բ 170 Մ 101-Ե		2002	այո
47	Բուլդոզեր Բ 170 Մ 101-Ե		2002	ոչ/2016թ./
48	Բուլդոզեր ԴԶ 162.2		2001	այո
49	Բուլդոզեր ԴԶ 162.2		2001	այո
50	Բ - 10 Մ բուլդոզեր	0712 SL	2008	այո
51	Էքսկավատոր ԵԿ-12	92 22 SL	2008	այո
52	ԷԿ - 12	9303 LS	2008	ոչ/09.2022թ./
53	Էքսկավատոր ԺԱԲ	15-59 LS	2011	այո
54	Էքսկավատոր անվավոր ԷՕ 2621		2002	ոչ/2016թ./
55	Ավտոկցորդիչ 10x57		2002	այո
56	Ավտոկռունկ QU 12 XCMG	763 OO 62	2008	ոչ/08.2021թ./
57	Եռակցման ագրեգատ ԱԴԴ 4004		2002	այո
58	Շարժական օդամղիչ ՊՎ-1018 ՄՎ		2002	ոչ/2015թ./
59	Բուլդոզեր ԴԶ-110		1983	ոչ/2016թ./
60	ՄԱԶ - 555	259 LS 28	2008	այո
61	QY12 Ավտոկռունկ	268 LS 28	2010	այո
62	JSB 3 CX	0749 LS	2008	այո



<i>Մխչյանի արտադրամաս</i>				
63	ՎԱԶ 21213	319 AT 61	2001	այո
64	ՎԱԶ-21213	613LL 64	2001	ոչ/03.2021թ/
<i>Մխչյանի տեղամաս</i>				
65	ՎԱԶ 21214	243 LL10	2001	այո
<i>Դեբետ - Աղստևի տեղամաս</i>				
66	ԳԱԶ 3110	042 LU 01	2002	այո
<i>Հարավային տեղամաս</i>				
67	Վազ 21150 -199	120 LU 63	2005	ոչ/10.2022թ/
68	Ավտոկոուսնկ ԿՍ 3562 Վ	446 UL56	1983	ոչ/2014թ/
<i>Արմավիրի ջրանցքի</i>				
69	ՎԱԶ 21213	224 LU 64	2002	այո
<i>Արմավիրի ջրանցք գլխամաս</i>				
70	LADA NIVA	917 CL 61	2022	այո
<i>Ախուրյանի ջրամբար</i>				
71	ՎԱԶ 21213	413 SO 61	2002	այո
72	ՎԱԶ 21213	254LL 10	2002	ոչ/09.2022թ/
<i>Թալինի ջրանցք գլխամաս Միջ.Պետ. խումբ</i>				
73	ԳԱԶ 3102	231 LL 11	2002	այո
74	ՎԱԶ 21214	102 LL 10	2003	այո
<i>Թալինի ջրանցք</i>				
75	ՎԱԶ 21214	478 LP 61	2012	այո
76	ՎԱԶ 21213	329 AT 61	1998	վթար
77	ՎԱԶ 21213	415 SO 61	2002	այո
78	ՎԱԶ 21213	480 SU 46	2002	այո
79	ԳԱԶ 3110	283 LO 64	1996	այո
	մանեկադարձակ. և հղկող պարագաներ	ԷԱՃԱՊՁԲ-23/28	«Դավիթ և Միքայել» ՍՊԸ	25.04.23	319 000
	ձեռքի գործիքների ձեռքբերում	ԷԱՃԱՊՁԲ-23/29	«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ	03.05.23	152 998
	գործիքների ձեռքբերում	ԷԱՃԱՊՁԲ-23/30 ԷԱՃԱՊՁԲ-23/30	«Դավիթ և Միքայել» ՍՊԸ	17.05.23	7 999
			«2ԼԵՅԿԱ ՌԵՁՈՐՏ» ՍՊԸ	16.05.23	186 390



	ավտոմեքենաների անիվներ	ԷԱՃԱՊՁԲ-23/33	«Արպանիվ» ՍՊԸ	03.05.23	4 232 500
	համակարգչային տեխնիկա	ԷԱՃԱՊՁԲ-23/35-1	«Այ-Թի Թրեյդինգ» ՍՊԸ	01.06.23	215 880
		ԷԱՃԱՊՁԲ-23/35-2	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	07.06.23	153 960
	ձեռքի գործիքներ /կողպեք/	ԷԱՃԱՊՁԲ-23/36	«ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	12.06.23	325 440
	տնտեսական ապրանքներ/ հագուստ, կոշիկ/	ԷԱՃԱՊՁԲ-23/39-1	«ԷԼԱՍՄՈՂԱ» ՍՊԸ	20.07.23	330 000
		ԷԱՃԱՊՁԲ-23/39-2	«ՄաքսՎին» ՍՊԸ	21.07.23	628 992
		ԷԱՃԱՊՁԲ-23/39-3	«Մեծ Ծխածան» ՍՊԸ	20.07.23	199 620
		ԷԱՃԱՊՁԲ-23/39-4	«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ	20.07.23	132 996
	կուտակիչ մարտկոցներ	ԷԱՃԱՊՁԲ-23/40	«Արպանիվ» ՍՊԸ		148 750
	Բարձր անցողունակությամբ ավտոմեքենաներ	ԷԱՃԱՊՁԲ-23/41	«ՄԵԳՆԱ» ՍՊԸ	31.08.23	31 800 000
	ինքնաթափ բեռնատար	ԷԱՃԱՊՁԲ-23/42	«ԱԿՇՆ ԿՈ» ՍՊԸ	06.09.23	44 999 662
	էլեկտրական ապրանքներ	ԷԱՃԱՊՁԲ-23/43-1	«Ասմիդա» ՍՊԸ	18.09.23	114 240
		ԷԱՃԱՊՁԲ-23/43-2	«Ռուզաննա Մինասյան Վաղինակի» ԱՁ	20.09.23	149 000
		ԷԱՃԱՊՁԲ-23/43-3	«Մաքս Վին» ՍՊԸ	19.09.23	122 820
	էլեկտրական ապրանքներ	ԷԱՃԱՊՁԲ-23/44-1	«Էլիտ Կաբել» ՍՊԸ	18.09.23	79 500
		ԷԱՃԱՊՁԲ-23/44-2	«Մաքս Վին» ՍՊԸ	18.09.23	263 460
	էլեկտրական ապրանքներ	ԷԱՃԱՊՁԲ-23/45-1	«Ասմիդա» ՍՊԸ	18.09.23	43 320
		ԷԱՃԱՊՁԲ-23/45-2	«Ռուզաննա Մինասյան Վաղինակի» ԱՁ	20.09.23	240 765
		ԷԱՃԱՊՁԲ-23/45-3	«Սոնիկ Երիցյան Աշոտի» ԱՁ	18.09.23	57 769
	եռակցման նյութեր	ԷԱՃԱՊՁԲ-23/47	«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	24.10.23	271 440
	օդորակիչ	ԷԱՃԱՊՁԲ-23/48	«Փի-Լենդ» ՍՊԸ	27.10.23	249 600
	կուտակիչ մարտկոցներ	ԷԱՃԱՊՁԲ-23/49	«Արպանիվ» ՍՊԸ	24.10.23	303 998
	յուղեր և հակասառիչ հեղուկ	ԷԱՃԱՊՁԲ-23/50	«Հայկ Մկրտչյան» Ա/Ձ	18.10.23	416 000
	հեղուկներ	ԷԱՃԱՊՁԲ-23/51	«Բի ԹՈՒ ՋԻ» ՍՊԸ	30.10.23	524 640
	չափիչ քանոններ	ԷԱՃԱՊՁԲ-23/54	«Դավիթ Պետրոսյան» ԱՁ	01.11.23	850 000
	գրասենյակային կահույք	ԷԱՃԱՊՁԲ-23/55-1	«Մեգասֆիս» ՍՊԸ	08.11.23	296 196
		ԷԱՃԱՊՁԲ-23/55-2	«Մերկադո» ՍՊԸ	14.11.23	217 760
		ԷԱՃԱՊՁԲ-23/55-3	«ԳՈՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	14.11.23	354 000
	Կուտակիչ մարտկոցներ, 65Ա	ԷԱՃԱՊՁԲ-23/56	«Արպանիվ» ՍՊԸ	07.11.23	29 749
	Բրոնզե գլանվածք	ԷԱՃԱՊՁԲ-23/57	«ԲԵԼՄԵՏ» ՍՊԸ		511 000

142 534 032

**ՄԵԿ ԱՆՁԻՑ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ**

1	Գնումների խորհրդատվություն	ՏԴ 1-032-105/1	«ԳՈՐԾՔ» ՍՊԸ	23.03.23	
2	թթվածնի ձեռքբերում	ՄԱԱՊՁԲ-23/1	«Օմեգա» ՍՊԸ	28.03.23	528 500
3	Գրենական ապրանքներ	ՄԱԱՊՁԲ-23/2	«Սմարթլայն» ՍՊԸ	10.04.23	657 270
4	Համակարգչային պարագաներ	ՄԱԱՊՁԲ-23/3-1	«Բայլափոփ» ՍՊԸ	14.04.23	37 300
		ՄԱԱՊՁԲ-23/3-2	«Դիվայս» ՍՊԸ	10.04.23	24 600
5	Տնտեսական ապրանքներ	ՄԱԱՊՁԲ-23/4	«ՊՐՈՖ ՕՖԻՍ» ՍՊԸ		443 030
6	Հաշվառման գրքեր	ՄԱԱՊՁԲ-23/5	«Քոփի Փրինթ» ՍՊԸ	01.09.23	193 500
7	Կահույք	ՄԱԱՊՁԲ-23/6	«Մերկադո» ՍՊԸ	06.10.23	150 000
9	Ստորին Հրազդանի ջրանցքի հեղինակային հսկ.	ՄԱՇՁԲ-23/1	«ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ	13.03.23	151 800
10	Արտաշատի մայր ջրանցքի հեղինակային հսկ.	ՄԱՇՁԲ-23/2	«ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ	13.03.23	97 600
11	Արմավիրի ոռոգման համակարգի հեղինակ. հսկ.	ՄԱՇՁԲ-23/3	«ԲԻՄ ԻՆՓԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	13.03.23	90 600
12	Արզնի-Շամիրամ մայր ջրանցքի հեղինակ. հսկ.	ՄԱՇՁԲ-23/4	«ԲԻՄ ԻՆՓԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	13.03.23	121 100
13	Թալինի ոռոգման համակարգի հեղինակ հսկ.	ՄԱՇՁԲ-23/5	«ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ	13.03.23	68 600
14	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ՄԱՇՁԲ-23/6	«Սերվիս Պլուս» ՍՊԸ	13.04.23	600 000



**Ընդամենը՝ 390,395.2 հազար դրամ:**

Աուդիտորական խմբի կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել է գնումների գործընթացներ, որոնց արդյունքում պարզվել է.

6.1 Ընկերությունն իր կարիքների համար Արտաշատի մայրի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռք բերման նպատակով 2023 թվականի փետրվարի 22-ին «ՀԱՌ» ՍՊԸ-ի հետ կնքել է ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագիր, որի գինը կազմում է 14,999.31 հազար դրամ:

Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակված է 2023 թվականի մարտի 20-ին (17 աշխատանքային օր ուշացումով):

*Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1 կետով սահմանված պահանջը, այն է. «Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը»:*

6.2 Նշված ընթացակարգով գնումների գործընթացն իրականացվել է 3 փուլով՝ կատարողական ակտ N 1, կատարողական ակտ N 2 և կատարողական ակտ N 3:

**Հարկ է նշել, որ N 1 կատարողական ակտի փաթեթում կան մի շարք անհամապատասխանություններ՝**

*ա) Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման արձանագրություն N1-ում սխալ է նշված կազմման ամսաթիվը, հաշիվ ապրանքագրի կազմման ամսաթիվը, սերիան և համարը:*

*բ) պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման արձանագրություն N3-ը կազմմամբ է ջնջումներով:*

2. Ընկերությունը իր կարիքների համար Մխչյանի 1-ին և 2-րդ աստիճանի Պ/Կ ջուրընդունիչ ավազանների մաքրման աշխատանքների ձեռք բերման նպատակով ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/13 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 3-ի թիվ 3 պայմանագիր կնքելու որոշման

մասին արձանագրությունը՝ տեղեկագրում հրապարակել է 2023 թվականի մարտի 9-ին (3 աշխատանքային օր ուշացումով):

*Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1 կետով սահմանված պահանջը, այն է.* «Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը»:

2023 թվականի մարտի 28-ին ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/13 ծածկագրով գնման պայմանագիր է կնքվել Ընկերության և «ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ-ի միջև:

Կնքված պայմանագրի մասին հայտարարություն տեղեկագրում հրապարակված է սույն թվականի մայիսի 2-ին (24 աշխատանքային օր ուշացումով):

*Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1 կետով սահմանված պահանջը, այն է.* «Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը»:

3. Ընկերության կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-23/2 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով Ստորին Հրազդանի ջրանցքի 1-ին հերթի հիմնանորոգման աշխատանքների ձեռք բերման նպատակով 2023 թվականի օգոստոսի 4-ին ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-23/2 ծածկագրով գնման պայմանագիր է կնքվել Ընկերության և «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի միջև:

6.3 Կնքված պայմանագրի մասին հայտարարություն տեղեկագրում հրապարակված է սույն թվականի օգոստոսի 11-ին (24 աշխատանքային օր ուշացումով):

*Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1 կետով սահմանված պահանջը, այն է.* «Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը»:



## 7. Գործուղումներ

Ընկերության կողմից 2023 թվականի ընթացքում արտասահմանյան գործուղումներ չեն իրականացվել:

Ներքին գործուղումների փաստացի ծախսը կազմել է 400 հազար դրամ:

Գործուղումների գործընթացի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են որոշակի անհամապատասխանություններ՝

7.1 Տնօրենի կողմից արձակված գործուղումների վերաբերյալ հրամաններում բացակայում է հղումը ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մասին:

Առաջարկում ենք այսուհետ ընդունել ի գիտություն:

## 8. Կադրային գործ

8.1 Ընկերության գլխավոր տնօրենի կողմից արձակված որոշ հրամաններ կազմվել են առանց վերնագրի, **չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները**, դրանք են. «1. Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:

2. Նորմատիվ իրավական ակտի վերնագիրը գրվում է մեծատառերով, և վերնագրի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում:

3. Նորմատիվ իրավական ակտերի վերնագրերում արգելվում է կիրառել հապավումներ կամ բառերի կրճատումներ»:

8.2 Ընկերության տնօրենի կողմից արձակված որոշ հրամաններում չեն կատարվել հղումներ:

**Չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջը, այն է.** «Նորմատիվ իրավական ակտերով սահմանված նորմերի անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով իրավական ակտում կիրառվում են հղումներ: Հղումները նորմատիվ իրավական ակտի հոդվածներում, մասերում, կետերում, ենթակետերում, պարբերություններում նորմատիվ իրավական այլ

ակտի հողվածներին, մասերին, կետերին, ենթակետերին, պարբերություններին, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերին կամ դրանց առանձին դրույթներին կիրառվում են նաև, երբ անհրաժեշտ է ընդգծել այդ դրույթների փոխադարձ կապը: Հղումները կատարվում են հստակ և ուղղակի»:

Աուդիտորական խմբի կողմից ուսումնասիրության է ենթարկվել աշխատակիցների անձնական գործերի ամբողջականությունը, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

### **9. Վարձակալություն, վարձակալությունից ստացված եկամուտների և դրանց հաշվառման ուսումնասիրություն**

2023 թվականի համար գործել են թվով 5 անշարժ գույքի վարձակալության պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր):

**Թվով 5 պայմանագրերից 3-ը չեն վավերացվել նոտարական կարգով, այդ թվում.**

1. 2015 թվականի հոկտեմբերի 7-ին «Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ-ի և «Գրին Էներջի» ՍՊԸ-ի միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր: Պայմանագրով վարձակալության է տրամադրվել Վայոց Ձորի մարզի Գետափ համայնքի տարածքում գտնվող 432 քմ մակերեսով Վերնաշենի պոմպակայանը (այսուհետ՝ Գույք), իրեն ենթակառուցվածքներով և սարքավորումներով՝ 20 տարի ժամկետով և ամսական 220 հազար դրամ վարձավճարով՝ ներառյալ ԱԱՀ-ն, որը ըստ Պայմանագրի 3.1 կետի, Գույքի կադաստրային արժեքի մոտ 5%-ն է:

Գույքը վարձակալությամբ է տրամադրվել Ընկերության բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովի 2015 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 3-Բ որոշման համաձայն:

2. 2023 թվականի հունվարի 30-ին «Ջրառ» ՓԲԸ-ի և «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի միջև կնքվել է տարածքների վարձակալության պայմանագիր, որի մեջ ներառվել են նաև բոլոր կոմունալ ծառայությունները: Պայմանագրով վարձակալության է տրամադրվել ք. Երևան, Վարդանանց փակ. 8 հասցեում գտնվող շենքի 5-րդ հարկը՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ժամկետով՝ 3,120 հազար դրամ վարձավճարով՝ ներառյալ ԱԱՀ-ն:



Ի դեպ գործարքը դիտվել է որպես ծառայությունների մատուցում: Պայմանագիրը կնքվել է գնումների ընթացակարգով իրականացվող մրցույթի արդյունքում:

3. 2017 թվականի ապրիլի 22-ին «Ջրառ» ՓԲԸ-ի և «Էնգելս Թումանյան» ՍՊԸ-ի միջև կնքվել է տարածքի վարձակալության պայմանագիր: Պայմանագրով վարձակալության է տրամադրվել Դավիթ Բեկի ջրամբարի իրիգացիոն ջրթող, կարգավորող սարքավորումների շենքից 6 քմ տարածք՝ սկսած 2017 թվականի օգոստոսի 13-ից՝ 25 տարի ժամկետով՝ տարեկան 12 հազար դրամ վարձավճարով՝ ներառյալ ԱԱՀ-ն:

*Խախտվել է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 610 հոդվածի 2-րդ կետի պահանջը, այն է.* «Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման» և նույն օրենսգրքի 611 հոդվածի պահանջը, որտեղ ասվում է. «Անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման»:

4. Համաձայն «Ջրառ» ՓԲԸ-ի և «ԿՎԱՐՑ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված Պայմանագրի, ՀՀ Վայոց ձորի մարզի, Արենի համայնքի, Արփի գյուղի Երևանայան խճուղի 14 շենք հասցեում գտնվող անշարժ գույքը 2,538.18 քմ. ընդհանուր մակերեսով վարձակալությամբ է տրամադրվել՝ ամսական 260 հազար դրամով:

Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով:

5. Համաձայն «Ջրառ» ՓԲԸ-ի և «Ատլաս-Պլյուս» ՍՊԸ-ի միջև 2017 թվականի հունիսի 27-ին կնքված Պայմանագրի, ՀՀ Տավուշի մարզի, Այգեձոր համայնքի 8-րդ փողոցի թիվ 103 հասցեում գտնվող անշարժ գույքը 122.7 քմ. ընդհանուր մակերեսով վարձակալությամբ է տրամադրվել՝ տարեկան 300 հազար դրամով:

Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով:

*Առաջարկ. վերանայել անշարժ գույքի վարձակալության պայմանագրերը, պարտադիր վավերացնել նոտարական կարգով:*

## 10. Փոխառություն

2017 թվականի մարտի 9-ին փոխառության պայմանագիր է կնքվել Ընկերության և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջև, անտոկոս՝ 200,000 հազար դրամի չափով՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 30-ը մարման ժամկետով: Սակայն նշված փոխառությունը սահմանված ժամկետում չի մարվել, համապատասխան համաձայնագրերով երկարացվել են մարման ժամկետները: 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ փոխառության պարտավորությունը կազմել է 125,000 հազար դրամ, 2023 թվականին մարվել է ընդամենը 9,000 հազար դրամ և 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 116,000 հազար դրամ, որն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես փոխառություն՝ «Ոչ ընթացիկ պարտավորություններ»-ում:

2024 թվականի փետրվարի 28-ին կնքված համաձայնագրով մարման ժամկետ է սահմանվել 2024 թվականի դեկտեմբերի 30-ը:

## 11. ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիա

**ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման նպատակով 2023 թվականի հունվարի 26-ին** պայմանագիր է կնքվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (Կոմիտե) և «Ջրառ» ՓԲԸ-ի միջև՝ հիմք ընդունելով հիմք ընդունելով 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՕ 455-Ն օրենքը, ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N346-Ն հրամանը:

Պայմանագրի առարկան՝ Կոմիտեն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման համաձայն, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի շրջանակներում 1004 ծրագրի 11001 միջոցառմամբ «Ոռոգում-ջրառ» իրականացնող Ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում»՝ 04.02.04.04, բյուջետային ծախսերի տմնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական



Ընկերություններին»՝ 4511 հողվածով 1,285,129.5 հազար դրամի չափով գումարը ստանում և 2023 թվականի ընթացքում տրամադրում է Ընկերությանը, ըստ եռամսյակային համամասնությունների, Ընկերությունը պարտավորվում է իր սպասարկման տարածքի ջրօգտագործողների ընկերություններին ապահովել համապատասխան ոռոգման ջրի մատակարարման ծառայություններով՝ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Ընկերությունը 2023 թվականի համար իր սպասարկման տարածքի ջրօգտագործողների ընկերություններին ծառայությունները մատուցում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2007 թվականի մարտի 1-ի «Սևան-Հրազդանյան-ջրառ» «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ների կողմից ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին N 61-Ա որոշմամբ հաստատված սակագներով.

1. ինքնահոս եղանակով մատակարարված ոռոգման ջրի սակագինը՝ 1.01 դրամ/խմ;
2. մեխանիկական եղանակով մատակարարված ոռոգման ջրի սակագինը՝ 11.52 դրամ/խմ:

Պայմանագրի համաձայն Ընկերության Նախահաշվով նախատեսվել է ինքնահոս եղանակով մատակարարվելիք ջրի քանակ՝ 1,074.4 մլն/խմ, իսկ մեխանիկական եղանակով՝ 88.5 մլն/խմ:

Հաշվարկն ըստ նախահաշվի ինքնահոս եղանակով կազմել է՝ 857,900 հազար դրամ և մեխանիկական եղանակով՝ 81,400 հազար դրամ՝ հաշվի առնելով 19.2 %-ի չափով ջրի կորուստները:

Ինքնահոս և մեխանիկական եղանակներով նախատեսվել է մատակարարել 939.3 մլն/խմ ոռոգման ջուր, որի դիմաց նախատեսված եկամուտները կազմել են 1,804,240 հազար դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, փաստացի մատակարարվել է 837 մլն/խմ, որի դիմաց հասույթը ԱԱՀ-ով փաստացի կազմել է՝ 1,677,380 հազար դրամ:

Պակաս է մատակարարվել 102.3 մլն/խմ ոռոգման ջուր, որը կազմել է 126,860 հազար դրամ:

## 12. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին 2023 թվականի ապրիլի 27-ին պայմանագիր է կնքվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի և «Ջրառ» ՓԲԸ-ի միջև՝ հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Աջակցություն ոռոգման համակարգի արդիականացմանը» ծրագրի «Աջակցություն ոռոգման համակարգի հիմնանորոգմանը» միջոցառման արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2023 թվականի նախահաշիվը հաստատելու, «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 484-Ն որոշումը, ՀՀ ֆինանսների նախարարի 2021 թվականի օգոստոսի 10-ի «Էլեկտրոնային համակարգի միջոցով դրամաշնորհների հատկացման ուղեցույցները դրամաշնորհային մրցույթի անցկացման ընթացքում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 422-Ա հրամանը:

Պայմանագրի առարկան՝ Պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի շրջանակներում 9025 ծրագրի 12001 միջոցառման «Աջակցություն ոռոգման համակարգերի հիմնանորոգմանը» 04.02.04 բյուջետային ծախսերի տմնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և առևտրային Ընկերություններին»՝ 4656 հոդվածով Ընկերությանը հատկացնել 722,663.7 հազար դրամ, իսկ Ընկերությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել վերը նշված որոշմամբ և Պայմանագրով նախատեսված կարգով:

Ծրագրով գումարները հատկացվել են ներքոհիշյալ միջոցառումներն իրականացնելու նպատակով.

1. Արտաշատի ջրանցքի հիմնանորոգում - 121,418 հազար դրամ;



2. Արտաշատի ջրանցքի և գլխամասային հանգույցի հիմնանորոգում - 151,827.1 հազար դրամ;
3. Ստորին Հրազդան ջրանցքի 1-ին հերթի գլխամասային հանգույցի հիմնանորոգում – 173,447 հազար դրամ;
4. Ստորին Հրազդան ջրանցքի 2-րդ հերթ. հերթի գլխամասային հանգույցի հիմնանորոգում – 197,403 հազար դրամ;
5. Արզնի-Շամիրամ ջրանցքի 2-րդ հերթի հիմնանորոգում - 78,538.5 հազար դրամ:

---

Ընդամենը՝ 722,663.7 հազար դրամ

Պահպանվել է Պայմանագրի 2.4 կետով ամրագրված պահանջների կատարումը.

1. ՀՀ հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի և վերը նշված որոշման դրույթներին համապատասխան հաշվառում;
2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործվել են Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով;
3. Ծրագրի իրականացման անհրաժեշտ ապրանքներն, աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

#### IV. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Աուդիտորական խմբի կողմից ուսումնասիրվել է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը, որի արդյունքում գնահատվել է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում առկա տեղեկատվությունների ստուգում, կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվությունների համապատասխանության ստուգում գործող ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

Առաջարկում ենք աուդիտորական հաշվետվությունում արձանագրված անհամապատասխանությունները, թերությունները և խախտումներն ընդունել ի գիտություն, հնարավորության դեպքում վերացնել դրանք կամ ընդհանրապես բացառել նման անհամապատասխանությունների, թերությունների և խախտումների թույլատրումը:

Առանձին բացահայտումները դարձնել քննարկման առարկա՝ խնդիրները դիտարկելով տնտեսելու, արդյունավետության և օգտավետության տեսանկյունից, որն Ընկերության գործունեության կառավարման գործընթացին կհաղորդի նոր արժեք ստեղծելու կարողություն:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ Ընկերության գործունեությունը բարելավելու անհրաժեշտության հարցը պետք է դարձնել քննարկման առարկա: Մասնավորապես, առաջարկվում է մշակել կազմերպության գործառույթների մանրամասն ուսումնասիրություն (business process review)՝ պարզելու գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման հնարավոր ուղղությունները, միաժամանակ նախատեսելով օպտիմալացման աշխատանքներ: Այս գործընթացում կարևորվում է արդի թվայնացման լուծումների ներդրման անհրաժեշտությունը՝ մարդկային գործոնի հնարավորիս բացառման, ինչպես նաև առկա գործելակերպերում ծախսարդյունավետ մոտեցումներ որդեգրելու ակնկալիքով: Լրացուցիչ խնդրահարույց ուղղություն է դեբիտորական պարտքերի մեծածավալ լինելու հանգամանքը, որը մեր գնահատմամբ պետք է լուծում ստանա հսկողական առավել արդյունավետ համակարգի կիրառման համատեքստում: Միաժամանակ, կարծում ենք, որ պետք է ջանքեր գործադրվեն վարչական և այլ ծախսերի կրճատման ուղղությամբ, հնարավորինս ամբողջության մեջ դրանք դարձնելով առավել օպտիմալ:

## **V. ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ**

Սույն եզրակացությունը կազմելիս հիմք է ընդունվել Ընկերության կողմից ներկայացված ֆինանսական ֆաշվետվությունները՝ իրենց հիմնավորումներով, ֆինանսական այլ փաստաթղթերը և դրանցում արտացոլված ցուցանիշները: Իրականացվել է Ընկերության



2023 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշիռի ուսումնասիրություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրությունները կատարվել են ներկայացված տեղեկատվության հիման վրա և Ընկերությունը հավաստում է, որ ներակայացված տեղեկատվությունը արժանահավատ է և չի պարունակում կեղծ տվյալներ է, ուստի աուդիտորական խումբը գտնում է, որ Ընկերության 2023 թվականի ֆինանսական հաշվետվություններում և ֆինանսական այլ փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաստի է:

Ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունն ուսումնասիրելիս կարող ենք հավաստել, որ էական առումներով ֆինանսական հաշվետվությունները արժանահավատ են և կազմվել են ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին, հարկային և այլ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ընկերության ներքին աուդիտի իրականացման ընթացքում ներքին հսկողության գործընթացների արդյունավետությունը գնահատելիս հիմնականում կարող ենք հավաստել, որ աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի կողմից իր պարտականությունները մասամբ են կատարված պատշաճ և ժամանակին, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման գործընթացները չեն գործել արդյունավետ և հուսալի, արդյունքում նպաստելով Ընկերության գործունեության խոշոր վնասի առաջացմանը:

**Նախորդ աուդիտի արդյունքում արձանագրված խնդիրների լուծման նպատակով տրված հանձնարարականի կատարում.**

#### **ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

Համաձայն Ընկերության կողմից ներկայացված պարզաբանման, 2023 թվականի ընթացքում իրականացված ներքին աուդիտի արդյունքում արձանագրված թերություններն ըստ գործողությունների ծրագրով նախատեսված ժամկետների շտկվել են մասնակի, իսկ դրանց մի մասը հաշվի են առնվել հետագա գործունեության ընթացքում:

1.	Խմբագրել և լրամշակել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը	Սույն ծրագիրը հաստատվելուց հետո 2 (երկու) ամսվա ընթացքում	Այս պահին գտնվում է մշակման փուլում
2.	Ստեղծել պահուստային հիմնադրամ՝ պահպանելով օրենքի և կանոնադրության ամրագրված պահանջները	Սույն ծրագիրը հաստատվելուց հետո 2 (երկու) ամսվա ընթացքում	Աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ
3.	Ընկերության որոշ հիմնական միջոցների միավորներ (ջրանցքներ, ջրամբարներ, պոմպակայաններ և այլն,) հաշվառել որպես ամբողջական, առանձին հիմնական միջոցների միավորներ	Հետագա գործունեության ընթացքում	Աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ
4.	Ընկերությունը բավարար դրամական միջոցներով ապահովելու նպատակով իրականացնել դեբիտորական պարտքերի հաշվառման առավել իրատեսական եղանակներ	Հետագա գործունեության ընթացքում	Աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ
5.	Աշխատանքների վարձատրության կառուցվածքում ներառել միայն օրենսդրությամբ սահմանված և նախատեսված լրավճարները, քննարկել ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու հարցը	Հետագա գործունեության ընթացքում	Աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ
6.	Աշխատակիցների և քաղաքացիների հետ պայմանագրեր կնքել՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերը	Հետագա գործունեության ընթացքում	Ընկերությունը վերացրել է պայմանագրերի կնքման դեպքում շեղումը ՀՀ օրենսդրությունից
7.	ԶՕԸ-երի հետ պայմանագրեր կնքելիս պահպանել ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2121-Ն որոշմամբ նախատեսված բոլոր անհրաժեշտ ընթացակարգերը	Հետագա գործունեության ընթացքում	Ընկերությունը աշխատում է ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2121-Ն որոշմամբ սահմանված նորմերի շրջանակներում
8.	Նախաձեռնել ընկերության որոշ ակտիվների համար արժեզրկման գործընթացները	Հետագա գործունեության ընթացքում	Աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ
9.	Քայլեր ձեռնարկել ինքնարժեքի մեջ ներառվող և չներառվող ծախսումները տարանջատելու և դրանք ճշգրիտ կերպով ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու համար	Հետագա գործունեության ընթացքում	Աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ
10.	Ընկերության սուբսիդիայի տրամադրում Ընկերել և իրականացնել ըստ սուբսիդիայի նկարագրության և բյուջեով սահմանված տվյալ միջոցառման նպատակի	Հետագա գործունեության ընթացքում	Աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ



Չկատարված կամ մասամբ կատարված առաջարկությունները շարունակում են մնալ արդիական, քանզի աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խմբի կողմից վերջիններիս մասով շարունակում է մնալ մնացորդային ռիսկեր և առաջարկվում է գործողության պատասխանատուների կողմից հետևողականորեն շարունակել իրականացնել առաջարկությունները և նվազեցնել մնացորդային ռիսկերը:

## VI. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՀՀ	Առաջարկություն	Կարևորության աստիճանը /հիմնական, միջին, փոքր/	Հղում հաշվետվությանը	Գործողության իրականացման համար պատասխանատու (ներ)	Կատարման վերջնաժամկետ
1.	Հաշվետվությունները պատաստել ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 235-Ն որոշմամբ սահմանված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան	հիմնական	1.2	տնօրեն, գլխավոր հաշվապահ	Շարունակական
2.	Կանոնադրության 16-րդ կետը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման 1-ին կետին	միջին	2.3	տնօրեն	31.07.2024
3.	Պահպանել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջը՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու նպատակով պարտադիր անցկացնել Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում	միջին	2.4	տնօրեն, գլխավոր հաշվապահ	30.11.2024
4.	Վերագնահատել հիմնական միջոցները, պահպանելով հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ՝ ՀՀՄՍ	միջին	2.4	տնօրեն, գլխավոր հաշվապահ	Շարունակական

5.	Քննարկել թվով 23 խափանված տրանսպորտային միջոցները հաշվեկշիռից դուրս գրելու հարցը՝ այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:	միջին	2.4	ՏԿԵՆ, տնօրեն, գլխավոր հաշվապահ	01.12.2024
6.	Ճիշտ իրականացնել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի անալիտիկ և սինթետիկ հաշվառումը	միջին	2.7	տնօրեն, գլխավոր հաշվապահ	Շարունակական
7.	Պահպանել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները. «Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները պետք է համապատասխանեն միմյանց»:	միջին	2.5	տնօրեն, գլխավոր հաշվապահ	Շարունակական
8.	Հիմնավորել ֆինանսական վիճակի մասին հաշվետուությամբ հաշվառված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվի առկայությունը և բացառել մնացորդների հավաստումների խեղաթյուրումների ռիսկերը	միջին	2.6	տնօրեն, գլխավոր հաշվապահ	Շարունակական
9.	Տնօրենին լրավճարներ հատկացնելու վերաբերյալ մշակել վճարման կարգ և ներկայացնել բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը	հիմնական	3.1	տնօրեն, Գլխավոր հաշվապահ	31.12.2024թ.
10.	Թույլատրվել է գերաձախս պարգևատրման և լրավճարների համար հատկացված գումարի նկատմամբ, այլևս բացառել	միջին	3.1	տնօրեն, Գլխավոր հաշվապահ	Շարունակական
11.	Չօգտագործված ամենամյա արձակուրդի փոխհատուցման համար ձևավորել ընթացիկ պահուստի ֆոնդ	միջին	3.1	տնօրեն, Գլխավոր հաշվապահ	Շարունակական
12.	Խիստ պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1 կետով սահմանված պահանջը	միջին	6.1	Գնումների համակարգող և պատասխանատու ստորաբաժանումներ	Հետագա գործունեության ընթացքում
13.	Խիստ պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1 կետով սահմանված պահանջը	միջին	6.1	Գնումների համակարգող և պատասխանատու	Հետագա գործունեության



				ստորաբաժա նումներ	ընթացքում
14.	Ընկերության տնօրենի կողմից արձակված հրամաններում կատարել համապատասխան հղումներ	միջին	8.2	տնօրեն, կադրերի բաժին	Հետագա գործունեու թյան ընթացքում
15.	Պահպանել Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները	միջին	8.1	տնօրեն, կադրերի բաժին	Հետագա գործունեու թյան ընթացքում
16.	Պահպանել Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պահանջները	միջին	8.2	տնօրեն, կադրերի բաժին	Հետագա գործունեու թյան ընթացքում
17.	Վարձակալության պայմանագրերը պարտադիր վավերացնել նոտարական կարգով, պահպանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ հոդվածի 2-րդ կետի և 611-րդ հոդվածի պահանջները	միջին	9	Տնօրեն, իրավաբան	Հետագա գործունեու թյան ընթացքում

ՀՀ ՏԿԵՆ «Զրառ» ՓԲԸ-ի

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահի ժ/պ՝

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ի

Տնօրեն՝

Ներքին աուդիտի բաժնի ղեկավար՝

Ներքին աուդիտի աշխատանքային խմբի ղեկավար՝

Ներքին աուդիտոր՝



Ա. Արգարյան

Ա. Արսենյան




Բ. Կարությունյան

Ա. Հովսեփյան



Ս. Ստեփանյան



Չ. Մաթոսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՋՐԱՌ»

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

22, ք.Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ [info@irar.am](mailto:info@irar.am)

«04» -06-2024թ.

ք. Երևան

**«Ջրառ» ՓԲԸ 2023 թվականի ֆինանսական գործունեության  
վերաբերյալ ներքին աուդիտի կողմից ներկայացված հաշվետվության  
վերաբերյալ առարկություններ**

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենք 92-րդ հոդվածի համաձայն ենթարկվել է աուդիտորական ուսումնասիրության «Գլոբ աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

Ուսումնասիրվել են «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, ինչպես նաև վերջիններիս համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին, հարկային և այլ օրենսդրության պահանջներին, գործունեությունը, կադրային քաղաքականությունը, պետական գնումների ընթացքի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությունը:

Հարկ է նշել, որ անդրադառնալով Ընկերության Բաժնետիրական ընկերության գործունեության արդյունավետությանը, աուդիտ իրականացնող ընկերությունը իր կողմից կազմված հաշվետվության 2.1.5 կետում(էջ 21-22 ) իրավացիորեն նշել է, որ **Ընկերության վճարունակության և ֆինանսական կայունության գործում մեծ տեղ է զբաղեցնում հատկապես Ընկերության կողմից վաճառվող ոռոգման ջրի սակագինը, որ 2007 թվականից ի վեր փոփոխության չի ենթարկվել, որը Ընկերության շարաունակականության հիմքում առաջնային կամ միակ տեղն զբաղեցնում:**

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ աուդիտորական ուսումնասիրություն իրականացնող ընկերության կողմից ներկայացված նախնական հաշվետվության մեջ ներառված որոշ դիտարկումների հետ «Ջրառ» Ընկերությունը համաձայն չէ, ուստի ներկայացնում ենք առարկությունները՝ փաստարկներով:

Անդրադառնալով Ընկերության Կանոնադրության 16-րդ կետը ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման 1- ին կետին համապատասխանեցնելուն(էջ 22-23), հարկ է նշել, «Ջրառ» Ընկերության 15-րդ կետն է իր մեջ ներառում Ընկերության վերստուգողին վերաբերելի դրույթները, որոք համապատասխանեցված են ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի պահանջներին, այնպես էլ ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման 1- ին կետին (կից ներկայացվում է):

Անդրանդառնալով նախնական հաշվետվության մեջ ներառված այն առաջարկին, համաձայն որի առաջարկվել է ճիշտ իրականացնել դեբիտորական և կրեդիտորական



պարտքերի սինթետիկ հաշվառում, հարկ են համարում նշել, որ վերոգրյալի մասով տարբերության հիմք է հանդիսանում նախկին գլխավոր հաշվապահի կողմից տրված ոչ ճիշտ հարկային պարտավորությունների վերաբերյալ ձևակերպումները:

Հաշվետվության 29-րդ էջում ներառված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներում ներառված 130,057.2 հազար դրամի չափով հաշվառված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվի առկայությունը հիմնավորելու և մնացորդների հավաստումների խեղաթյուրումների ռիսկերը բացառելու տեսանկյունից հայտնում են, որ վերոնշյալ 130,057.2 հազար դրամի չափով հաշվառված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվը ներառված է դեռևս 2006 թվականից, որի վերաբերյալ խեղաթյուրումների ռիսկերը բացառելը հնարավոր կլինի իրականացնել միայն Ընկերությունում համալիր վերագնահատում և գույքագրում իրականացնելու միջոցով:

Անդրադառնալով Ընկերության կողմից թույլ տրված պարզևատրման և լրավճարների մասով հատկացված գումարի նկատմամբ թույլ տրված գերաժախսի մասով հայտնում են որ նախատեսված 85,680 հազ դրամից զատ վճարված 56,957.8 հազար դրամը եղել է թափուր հաստիքների հաշվին տնտեսված գումար, ինչը որպես լրավճար լրացուցիչ և ծանրաբեռնված աշխատանքի դիմաց վճարվել է աշխատակիցներին, ինչի վերաբերյալ հետայսու հրամաններում նշում կարվի:

Անդրադառնալով հաշվետվության 6-րդ կետում նշված Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ի կետի և 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջը խախտելուն, հայտնում են, որ վերջինս եղել է խիստ ծանրաբեռնվածության արդյունք և վրիպել է աշխատակիցների աչքից:

Ինչ վերաբերվում է ՀՀՏԿԵՆՁԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի N1 և N3 կատարողական ակտերի փաթեթներում կատարողական ակտի փաթեթում առկա անհամապատասխանություններին, հայտնում են, որ Ընկերության 31.05.2024 թվականի N467 գրությամբ «ՀԱՌ ՍՊԸ-ին առաջարկվել է «Ջրառ» ՓԲԸ ներկայացնել ՀՀՏԿԵՆՁԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի N1 և N3 կատարողական ակտերի փաթեթներում առկա անհամապատասխանություններին ճշգրտված տարբերակները:

Անդրադառնալով 57-րդ էջում նշված այն պնդմանը, թե «...Ընկերության ներքին աուդիտի իրականացման ընթացքում ներքին հսկողության գործընթացների արդյունավետությունը գնահատելիս հիմնականում կարող ենք հավաստել, որ աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի կողմից իր պարտականությունները մասամբ են կատարված պատշաճ և ժամանակին, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման գործընթացները չեն գործել արդյունավետ և հուսալի, արդյունքում նպաստելով Ընկերության գործունեության խոշոր վնասի առաջացմանը», հայտնում են որ Ընկերության ղեկավարի կողմից իրականացվել է փաստաթղթային պատշաճ հսկողություն: Հարկ է նշել, որ Ընկերության ղեկավարին ներկայացված փաստաթղթերը ևս կեղծված են եղել, ինչն էլ նպաստել է Ընկերության գործունեության խոշոր վնասի առաջացմանը, իսկ ղեկավարը չգիտեր և չէր էլ կարող իմանալ փաստաթղթերի կեղծված լինելը, կեղծվածը տարբերակելու հանգամանքի մասին:

Առդիր՝ 1 խտաֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝



Ա.Ս. ԱԲԳԱՐՅԱՆ